15/06/2021թ.
Ժամը 10^{00}

«Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ
ք.Երևան, օդանավակայան «Զվարթնոց» -2

Արձանագրություն 3
ՀԱՕԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/12 ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրելու մասին

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝
Նախագահ՝ Ս. Սեդրակյան
անդամներ՝ Է. Դանիելյան
Ա. Հարությունյան
Հ.Ավագյան
Գ.Մանուկյան
քարտուղար՝ Թ. Հայրապետյան

1. Արտահերթ նիստ հրավիրելու մասին
1.1. Արտահերթ նիստը հրավիրվել է հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 2-ի թիվ 2-րդ արձանագրությամբ կայացված որոշումը, որը ենթակա է վերանայման՝ պայնավորված այն հանգամանքով, որ հաղթող է ճանաչվել նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը:

2. Բանակցությունների կազմակերպման վերաբերյալ
2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, մասնակիցներին հրավիրել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գների նվազեցման բանակցությունների, քանի որ մասնակիցների 1-ին (նախահաշվային ընդհանուր գինը 1640000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ) և 2-րդ (նախահաշվային ընդհանուր գինը 1290000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ) չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են գնման հայտով սահմանված նախահաշվային գները:
Ընդունել որոշում **կողմ *5 (հինգ)*, դեմ *0 (զրո)*** ձայներով.
3. Բանակցություններ վարելու տեղի և ժամի վերաբերյալ.
3.1. Բանակցությունների վարման սկիզբն է՝ բանակցությունների վարման մասին ծանուցումն մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ն իսկ բանակցությունների վարման վերջնաժամկետն է՝ նույն օրվա օրվա ժամը 10:30-ն: Բանակցությունները վարվելու են «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ-ում, հասցեն՝ ք.Երևան, օդանավակայան «Զվարթնոց»-2:
3.2. Հանձնաժողովի քարտուղարին՝ ծանուցել մասնակիցների բանակցությունների կազմակերպման վերաբերյալ:

Ընդունել որոշում **կողմ *5 (հինգ)*, դեմ *0 (զրո)*** ձայներով.

Նախագահ՝ Ս. Սեդրակյան _____
անդամներ՝ Է. Դանիելյան _____
Ա. Հարությունյան _____
Հ.Ավագյան _____
Գ.Մանուկյան _____
քարտուղար՝ Թ. Հայրապետյան _____